

աւրինակ բարեաց ուսումնասեր առընթերակայից¹ լինէին. մանաւանդ զի ունէին պատուիրանս զգուշացուցիչս² յաստուածակարգ պատգամաւորացն³, յորոց առաջինս⁴ հրամայէ, թէ՛ *Յաւրէնս Տեառն խորհեսցիս ի տուէ եւ ի գիշերիս*^ա. եւ երկրորդն հանգոյն նմին⁵ պատուիրէ, թէ՛ *Մի՛տ դիր ընթերցուածոց միսիթարութեան*⁶ վարդապետութեան, մի՛ անփոյթ առնել զշնորհացդ որ ի քեզ ես. յայդ խորհեա՛ եւ ի դոյն յամեսջիր. զայդ եթէ առնիցես, ե՛ւ զանձն ապրեցուցես⁷, ե՛ւ զայնտսիկ, որ քեզն⁸ լսիցես^բ:

[ԻԱ]

1 Ապա յետ այնորիկ⁹ դարձեալ¹⁰ այնպիսի առաւել¹¹ եւ բարձրագոյն վարդապետութեամբն¹² սկսեալ երանելոյն Մաշթոցի¹³ ճառս յաճախագոյնս¹⁴, դիւրապատումս, շնորհագիրս¹⁵, բազմադիմիս ի լուսաւորութենէ¹⁶ եւ ի հիւթոյ գրոց մարգարեականաց¹⁷ կարգել եւ յաւրինել, լի ամենայն ճաշակաւք աւետարանական¹⁸ հաւատոցն¹⁹ ճշմարտութեան²⁰: 2 Յորս²¹ բազում նմանութիւնս եւ աւրինակս ի յանցաւորացս²² աստի, առաւելագոյն վասն յարութեանական յուսոյն առ ի հանդերձեալսն, յերկրեալ կազմեալ²³, զի հեշտընկալք եւ դիւրահասոյցք տխմարագունիցն²⁴ եւ մարմնական իրաւք

1 *b* առ ընթերակաց / *c* ընթերակացիցն / *միւսն*. առ ընթերակայից

2 *c* զգացուցիչս

3 *e* պատգամաւորաց

4 *b* յորոցն առաջին

ա Զմմտ. Սաղմ. Ա 2:

5 *c* հանգոյն նմին / *միւսն*. *չիք* նմին

6 *b* միսիթարութեանն

7 *bc* ապրեցուցանես

8 *c* որք քեզն

բ Ա Տիմ. Դ 13-16

9 *բոլորը չիք* այնորիկ

10 *c* յետս դարձեալ

11 *ճա ճք* ապա յետ այնպիսի առաւել: *Այստեղից վերսկսուում ես ճա ճք*:

12 *b* վարդապետութեանն / *ճա ճք* վարդապետութեան

13 *ճա ճք* Մեսրոպբայ *չիս*. Մաշթոցի

14 *b* յաջախագոյնս

15 *b* եւ շնորհագիրս / *ճա ճք* շնորհագիւտս

16 *ճա ճք* բազմադիմիս ի զօրութենէ եւ

17 *c* մաքրականաց

18 *ճա ճք չիք* ճաշակօք աւետարանական

19 *ճա ճք* կարգեալ եւ յօրինեալ լի ամենայն հաւատոցն

20 *b* ճշմարտութեանն

21 *ճա ճք չիք* Յորս բազում *բառից մինչեւ* քաջալերել *ներառեալ*

22 *b* ի յանցաւորաց

23 *b* կազմի

24 *b* տխմարագունիցն / *միւսն*. ախմարագունիցն